# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շահումյան
համայնք, ՀՀ Լոռու մարզ, գ. Շահումյան 1փ. 66, Հեռ. (0322) 3
84 62, 3 78 97 , shahumyan.lori@mta.gov.am

N Ե-64/18
*14 մարտ 2018թ.*

**ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ**
**ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ**
**ԱՐԹՈՒՐ ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻՆ**

Կից ներկայացնում եմ Շահումյան համայնքի ավագանու 06.03.2018թ-ի 02 նիստի թիվ 06-Ա, 07-Ն, 08-Ն, 09-Ա, 10-Ա որոշումները:

Առդիր 5 թերթ:

3/14/2018

X

**Համայնքի ղեկավար՝** **Էդիկ Մանուկյան**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ
ՄԱՐԶԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շահումյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Շահումյան, (0322) 3 84 62, 3 78 97, shahumyan.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

06 ՄԱՐՏԻ 2018թվականի N 06-Ա

ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 Թ-Ի ՄԱՐՏԻ 06-Ի ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետի դրույթներով՝

**ավագանին որոշում է.**

Հաստատել Շահումյան համայնքի ավագանու 2018թ-ի մարտի 06-ի նիստի օրակարգը.

ՕՐԱԿԱՐԳ

2018թ-ի մարտի 06-ի թիվ 02 նիստի

1. ՀՀ Լոռու մարզի Շահումյան համայնքի ավագանու 16.11.2017թ-ի ,,Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շահումյան համայնքում 2018 թ-ի համար տեղական տուրքերի և վճարների տեսակները, դրույքաչափերը սահմանելու մասին,, թիվ 33-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին:
2. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շահումյան համայնքի վարչական սահմաններում գտնվող անշարժ գույքի սեփականատիրոջ կամ տիրապետողի՝ իր տիրապետման տակ գտնվող անշարժ գույքի և դրան հարակից ընդհանուր օգտագործման տարածքի պարտադիր բարեկարգման էությունը, ծավալը և պայմանները հաստատելու մասին:
3. Ռաֆիկ Բարսեղյանին սեփականության իրավունքով պատկանող գյուղատնտեսական արտադրական օբյեկտներով ծանրաբեռնված հողամասի կադաստրային արժեքի մասին:
4. ՀՀ Լոռու մարզի Շահումյան համայնքի սեփականություն համարվող հողամասերում լայնածավալ անտառապատման աշխատանքներ իրականացնելուն հավանություն տալու մասին:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՔՈՒԼՅԱՆ ՍԵՎԱԿ
2. ԲԵԺԱՆՅԱՆ ԱՐԵՆ
3. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԵԼԵՆԱ
4. ՂՈՒՄԱՇՅԱՆ ԱՐՄԵՆ
5. ՄԱՆՈՒԿՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ

**Համայնքի ղեկավար՝** **ԷԴԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շահումյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Շահումյան, (0322) 3 84 62, 3 78 97, shahumyan.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ու Մ

06 ՄԱՐՏԻ 2018թվականի N 07-Ն

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 16.11.2017Թ-Ի <<ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ, ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> ԹԻՎ 33-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Իրավական ակտերի մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 3-րդ մասով և 56-րդ հոդվածի 2-րդ մասով, Շահումյան համայնքի ավագանին՝

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է

1. ՀՀ Լոռու մարզի Շահումյան համայնքի ավագանու 16.11.2017թ-ի ,,Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շահումյան համայնքի տարածքում 2018թ-ի համար տեղական տուրքերի և վճարների տեսակները, դրույքաչափերը հաստատելու մասին,, թիվ 33-Ն որոշման հավելվածի ,,Տեղական վճարներ,, բաժինը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 14-րդ կետով.

<<14 ) համայնքը սպասարկող անասնաբույժի ծառայությունների դիմաց տեղական վճարի դրույքաչափը մեկ պայմանական միավոր անասունի համար ամսեկան կազմում է 100 /մեկ հարյուր/ դրամ՝ փոխհատուցման գումարի չափով:>>:

2. Սույն որոշումն օրենքով սահմանված կարգով ներկայացնել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն պետական իրավական փորձաքննություն անցկացնելու համար:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՔՈՒԼՅԱՆ ՍԵՎԱԿ
2. ԲԵԺԱՆՅԱՆ ԱՐԵՆ
3. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԵԼԵՆԱ
4. ՂՈՒՄԱՇՅԱՆ ԱՐՄԵՆ
5. ՄԱՆՈՒԿՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ

**Համայնքի ղեկավար՝** **ԵԴԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շահումյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Շահումյան, (0322) 3 84 62, 3 78 97, shahumyan.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

06 ՄԱՐՏԻ 2018թվականի N 08-Ն

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՍԵՓԱԿԱՆԱՏԻՐՈՋ ԿԱՄ ՏԻՐԱՊԵՏՈՂԻ՝ ԻՐ ՏԻՐԱՊԵՏՄԱՆ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԵՎ ԴՐԱՆ ՀԱՐԱԿԻՑ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏԱՐԱԾՔԻ ՊԱՐՏԱԴԻՐ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ԷՈՒԹՅՈՒՆԸ, ԾԱՎԱԼԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 36-րդ կետով, ,,Իրավական ակտերի մասին,,Հայաստանի Հանրապետության օրենքի 56-րդ հոդվածի 2-րդ մասով, Շահումյան համայնքի ավագանին՝

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շահումյան համայնքի վարչական սահմաններում գտնվող անշարժ գույքի սեփականատիրոջ կամ տիրապետողի՝ իր տիրապետման տակ գտնվող անշարժ գույքի և դրան հարակից ընդհանուր օգտագործման տարածքի պարտադիր բարեկարգման էությունը, ծավալը, պայմանները և իրականացման կարգը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն օրենքով սահմանված կարգով ներկայացնել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն պետական իրավական փորձաքննություն անցկացնելու համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՔՈՒԼՅԱՆ ՍԵՎԱԿ
2. ԲԵԺԱՆՅԱՆ ԱՐԵՆ
3. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԵԼԵՆԱ
4. ՂՈՒՄԱՇՅԱՆ ԱՐՄԵՆ
5. ՄԱՆՈՒԿՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ

**Համայնքի ղեկավար՝** **ԷԴԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ
ՄԱՐԶԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շահումյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Շահումյան, (0322) 3 84 62, 3 78 97, shahumyan.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

06 ՄԱՐՏԻ 2018թվականի N 09-Ա

ՌԱՖԻԿ ԲԱՐՍԵՂՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐՈՎ ԾԱՆՐԱԲԵՌՆՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԱՐԺԵՔԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով „Տեղական ինքնակառավարման մասին„ ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 9-րդ կետով, ՀՀ կառավարության 24.12.2003թ-ի թիվ 1746-Ն որոշման 2-րդ կետի դ ենթակետով, 13.04.2006թ-ի թիվ 713-Ն որոշումով, հաշվի առնելով Ռաֆիկ Բարսեղյանի դիմումը՝ Շահումյան համայնքի ավագանին.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ  Է

Տալ համաձայնություն Շահումյան համայնքի տարածքում 2-րդ փողոց 1-ին փակուղի 9 փոստային հասցեով, արդյունաբերության ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողերի նպատակային նշանակության, գյուղատնտեսական արտադրական օբյեկտների գործառնական նշանակության հողամասի 06-084-0026-0015 ծածկագրով գյուղատնտեսական արտադրական օբյեկտներով զբաղեցված 0.09 հեկտար հողամասի կադաստրային արժեքի նկատմամբ կիրառել 0.6 նվազեցնող գործակից՝ 900 X 1242 X 0.6 = 670680:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՔՈՒԼՅԱՆ ՍԵՎԱԿ
2. ԲԵԺԱՆՅԱՆ ԱՐԵՆ
3. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԵԼԵՆԱ
4. ՂՈՒՄԱՇՅԱՆ ԱՐՄԵՆ
5. ՄԱՆՈՒԿՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ

**Համայնքի ղեկավար՝** **ԷԴԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շահումյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Շահումյան, (0322) 3 84 62, 3 78 97, shahumyan.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

06 ՄԱՐՏԻ 2018թվականի N 10-Ա

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐՈՒՄ ԼԱՅՆԱԾԱՎԱԼ ԱՆՏԱՌԱՊԱՏՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, հաշվի առնելով ,,Հայանտառ,, ՊՈԱԿ-ի ,,Գուգարքի անտառտնտեսություն,, մասնաճյուղի տնօրեն Ա. Աղաբաբյանի 10.01.2018թ-ի թիվ 06 գրությունը՝ Շահումյան համայնքի ավագանին.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է

Տալ հավանություն Շահումյան համայնքի սեփականություն համարվող 06-084-0309-0003 կադաստրային ծածկագրում գտնվող 5,2 հա և 06-084-0310-0001 ծածկագրում գտնվող 2.0 հա հողատարածքներում ,,Հայանտառ,, ՊՈԱԿ-ի ,,Գուգարքի անտառտնտեսություն,, մասնաճյուղի կողմից լայնածավալ պտղատու անտառապատման աշխատանքներ իրականացնելուն: Հողատարածքները աշխատանքներն ավարտելուց հետո ևս կմնան որպես համայնքային հողեր:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՔՈՒԼՅԱՆ ՍԵՎԱԿ
2. ԲԵԺԱՆՅԱՆ ԱՐԵՆ
3. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԵԼԵՆԱ
4. ՂՈՒՄԱՇՅԱՆ ԱՐՄԵՆ
5. ՄԱՆՈՒԿՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ

**Համայնքի ղեկավար՝** **ԷԴԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ**